

Տեղեկատվություն

Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության 2011 թվականի միջոցառումների ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների մասին

	Միջոցառման անվանումը	Կատարված աշխատանքը	Ֆինանսական ապահովումը
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն			
1.	Քաղաքական և հասարակական կյանքում կանանց և տղամարդկանց մասնակցության մասին հետազոտության իրականացում	«Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում ««Կովկաս» հասարակագիտական կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից իրականացված «Հայաստանում հասարակական-քաղաքական մասնակցության գենդերային առանձնահատկությունները» սոցիոլոգիական հետազոտությունը, ամփոփվել են արդյունքները: Մարտի 30-ին ՄԱԲՀ հայաստանյան գրասենյակը պաշոնապես ներկայացրեց հետազոտության արդյունքները: Հետազոտության նպատակն էր ուսումնասիրել հասարակական-քաղաքական գործընթացներին կանանց և տղամարդկանց մասնակցության համեմատական բնութագիրն ու դինամիկան և բացահայտել այդ գործընթացներին կանանց լիարժեք մասնակցությանը նպաստող կամ խոչընդոտող սոցիալական, տնտեսական, քաղաքական, կրթական, բարոյահոգեբանական և այլ գործոնները:	ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ
2.	Լրատվամիջոցների աշխատողների որակավորման բարձրացում ուղղված նրանց գենդերային մտածելակերպի ձևավորմանը, գենդերային գիտելիքների հաղորդմանը և գենդերային զգայունության բարձրացմանը	2011թ.-ի ապրիլի 22-ին ՄԱԲՀ-ի «Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում» ծրագիրը անցկացրեց սեմինար գենդերային հավասարության և գենդերային բռնության հիմնախնդիրներին անդրադարձող լրագրողների համար: Սեմինարի նպատակն էր հայկական հեռուստաընկերությունները, ռադիոն, տպագիր մամուլը և լրատվական գործակալությունները ներկայացնող լրագրողների միջև փորձի փոխանակումը և նրանց կարողությունների զարգացումը:	ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ

3.	Հայաստանի Հանրապետության մեջ գենդերային իրավիճակի պարբերական գնահատման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում	2011թ. Համաշխարհային Բանկի աջակցությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ՀՀ Էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ իրականացվել է «Կայուն զարգացման ծրագրի մշտադիտարկման գենդերային զգայուն և տարաբաժանված ցուցիչներ» ծրագիրը: Ուսումնասիրվել է գենդերային իրավիճակի շարժնթացի գնահատման և մշտադիտարկմանն ուղղված միջազգային փորձը, մշակվել են գենդերային ցուցիչներ սոցիալական, տնտեսական, առողջապահության, գիտության և կրթության, գյուղատնտեսության ոլորտներում: Մշակված ցուցիչները լինելով ունիվերսալ, հնարավորություն կտան գնահատել ոչ միայն կոնկրետ ծրագրեր, այլև իրականացնել գենդերային վերլուծություններ տարբեր ոլորտներում: Ծրագրի շրջանակներում մշակվել է նաև մեթոդական ձեռնարկ, որը ներկայում տպագրության փուլում է: Առաջիկա տարիներին քայլեր կձեռնարկվեն դրանց ներդրմանն ուղղությամբ:	Համաշխարհային Բանկ
4.	Պետական ծառայողների որակավորման բարձրացում ուղղված նրանց գենդերային մտածելակերպի ձևավորմանը, գենդերային գիտելիքների հաղորդմանը և գենդերային զգայունության բարձրացմանը	Տարվա ընթացքում իրականացվել է «Գենդերային հիմնահարցեր» թեմայով քաղաքացիական ծառայողների (բարձրագույն, գլխավոր, առաջատար, կրտսեր պաշտոնների համար) վերապատրաստման դասընթացներ ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի 2008թ. հուլիսի 8-ի N 567-Ա որոշմամբ հաստատված ծրագրով, որի շրջանակում վերապատրաստվել են բարձրագույն, գլխավոր, առաջատար, կրտսեր պաշտոնների շուրջ 100 քաղաքացիական ծառայողներ:	ՀՀ պետական բյուջե
ՀՀ մշակույթի նախարարություն			
1.	«Կին միջազգային կինոփառատոն»	Կինոփառատոնի ընթացքում ցուցադրվել են 52 կինոռեժիսորների ֆիլմեր, ավելի քան 16 երկրներից:	ՀՀ պետական բյուջե «Աջակցություն կինոարվեստին» ծրագրի շրջանակներում
2.	Ոչ նյութական	1.Երևանում Հովհ. Շարամբերյանի անվան ժողովրդական	ՀՀ պետական բյուջե

	<p>մշակութային ժառանգության կրողների միջոցով վարպետաց դասերի կազմակերպում</p>	<p>ստեղծագործության թանգարանում կազմակերպվել են գորգագործության և կարպետագործության դասընթացներ: 2. ՀՀ Սյունիքի մարզում /ք. Մեղրի/ ավանդական խոհանոցի, առօրյա և տոնածիսական ուտեստների ուսուց-ման վերապատրաստման դասընթացներ: Վերապատրաստման դասընթացներին մասնակցել են 36 մասնագետներ:</p>	<p>«Պետական աջակցություն ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանմանը» ծրագրի շրջանակներում</p>
ՀՀ Կրթության և գիտության նախարարություն			
<p>1.</p>	<p>Հանրակրթական դպրոցի ուսուցիչների որակավորման բարձրացում՝ ուղղված նրանց գենդերային մտածելակերպի ձևավորմանը, գենդերային գիտելիքների հաղորդմանը և գենդերային զգայունության բարձրացմանը</p>	<p>Մշակվել է հանրակրթական դպրոցի ուսուցիչների համար գիտելիքների նախատեսված <<Գենդերային հիմունքներ>> թեմայով ներդիրը, որը կհաստատվի 2012թ. և կներառվի <<Հասարակագիտություն>> առարկայի ուսուցիչների վերապատրաստման մոդուլում:</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվել</p>
<p>2.</p>	<p>Հանրակրթական դպրոցների տնօրենների և փոխտնօրենների որակավորման բարձրացում ուղղված նրանց գենդերային մտածելակերպի ձևավորմանը, գենդերային գիտելիքների հաղորդմանը և գենդերային զգայունության բարձրացմանը</p>	<p>Մշակվել է հանրակրթական դպրոցի ղեկավար կադրերի համար նախատեսված <<Գենդերային գիտելիքների հիմունքներ>> թեմայով ներդիրը, որը կհաստատվի 2012թ. և կներառվի հանրակրթական դպրոցների տնօրենների և փոխտնօրենների վերապատրաստման մոդուլում:</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվել</p>
<p>3.</p>	<p>Մովորողների մոտ մասնագիտական կողմնորոշման հարցերում իրազեկվածության բարձրացում՝</p>	<p>Երաշխավորվել է հանրակրթական դպրոցներում դասղեկների համար նախատեսված <<Դաստիարակչական աշխատանքը դպրոցում. մասնագիտական կողմնորոշման խնդիրներ>> օժանդակ ձեռնարկը, այն տպագրվել է անհրաժեշտ</p>	<p>ՀՀ պետական բյուջեով ձեռնարկների համար նախատեսված գումարի շրջանակներում</p>

<p>ուղղված գենդերային կարծրատիպերի հաղթահարմանը, աղջիկների և տղաների շրջանում իրենց սեռի համար ոչ ավանդական մասնագիտությունների նկատմամբ մոտիվացիայի ձևավորմանը</p>	<p>քանակությամբ ու ներդրվել է:</p>	
---	------------------------------------	--

ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն

<p>1. Գյուղատնտեսության և գյուղական ենթակառուցվածքների բարելավում, գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացներում կանանց մասնակցության հնարավորությունների ընդլայնում և այդ ուղղությամբ միջոցառումների իրականացում</p>	<p>Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ» պետական հիմնարկի կողմից իրականացվող «Շուկայավարման հնարավորություններ ֆերմերներին» վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում «Գյուղական ենթակառուցվածքներ» բաղադրիչով 2011 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները`</p> <ul style="list-style-type: none"> • ՀՀ Շիրակի մարզի Մեծ Մանթաշ և Փոքր Մանթաշ, ՀՀ Լոռու մարզի Մեծ Այրում և Փոքր Այրում, ՀՀ Վայոց ձորի մարզի Արփի և Աղավնաձոր համայնքների գազաֆիկացում, • ՀՀ Լոռու, Շիրակի, Տավուշի և Սյունիքի մարզերի ընդհանուր թվով 12 համայնքի ջրամատակարարման համակարգի վերականգնում, • ՀՀ Լոռու մարզի Նովոսելցովո և ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիկ համայնքների ջրարբիացման համակարգի վերականգնում, • ՀՀ Տավուշի մարզի Ոսկեպար, Բաղանիս, Ոսկեան և Կոթի համայնքների ոռոգման համակարգի վերականգնում, • ՀՀ Տավուշի մարզի Բերդ, Թովուզ, Ներքին Կարմիր Աղբյուր, Վերին Կարմիր Աղբյուր և Մովսես համայնքների ներտնտեսային ոռոգման ցանցերի վերականգնում, • ՀՀ Վայոց ձորի մարզի Վարդահովիտ համայնքի ոռոգման 	<p>Միջազգային կազմակերպություններ</p>
--	--	---------------------------------------

		<p>համակարգի վերականգնում: Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ԾԻԳ վարկային ծրագրի շրջանակներում ՀՀ 6 մարզի՝ Արագածոտնի, Լոռու, Շիրակի, Տավուշի, Գեղարքունիքի և Սյունիքի 45 համայնքում հիմնադրվել են «Համայնքի արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներ, որոնց վարչության անդամների ավելի քան 18 տոկոսը կանայք են (87 կին): Կոոպերատիվների ստեղծումը կնպաստի կանանց համար լրացուցիչ աշխատատեղերի ստեղծմանը, եկամուտների ավելացմանը, գյուղական աղքատության նվազեցմանը:</p>	
2.	<p>Կայուն զարգացման ծրագրի շրջանակներում գյուղի կանանց աղքատության հաղթահարմանն ուղղված ծրագրերի իրականացում, մասնավորապես, մատչելի պայմաններով տրվող վարկային և միկրովարկային ծրագրերի իրականացում</p>	<p>Համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 31-ի N 349-Ն որոշմամբ հաստատված «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» կարգի՝ գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու համար հանրապետության առևտրային բանկերի կողմից տրամադրվել են արտոնյալ վարկեր՝ հետևյալ պայմաններով.</p> <ul style="list-style-type: none"> - յուրաքանչյուր գյուղացիական տնտեսությանը տրամադրվող վարկի մայր գումարը կազմում է մինչև 3 միլիոն ՀՀ դրամ՝ մինչև 2 տարի մարման ժամկետով, - վարկը տրամադրվում է առավելագույնը 14 տոկոս փաստացի տոկոսադրույքով, որի 4 տոկոսային կետը սուբսիդավորվում է պետության կողմից, իսկ հանրապետության առավել կարիքավոր համայնքներում՝ 6 տոկոսային կետը: <p>Տարվա ընթացքում հանրապետության 837 համայնքում տրամադրվել է 25217 միավոր վարկ՝ 17,425 մլրդ դրամ գումարով, որից շուրջ 12 տոկոսը բաժին է ընկնում կանանց:</p> <p>Արտոնյալ պայմաններով վարկերի տրամադրումը կլիթանի կանանց ձեռնարկատիրական գործունեության</p>	<p>Միջազգային կազմակերպություններ</p>

		<p>իրականացմանը, կնպաստի նոր աշխատատեղերի ստեղծմանը, եկամուտների ավելացմանը, աղքատության նվազեցմանը, ի վերջո կհանգեցնի գյուղի կանանց ակտիվության բարձրացմանն ու կենսապայմանների բարելավմանը:</p>	
--	--	--	--

ՀՀ առողջապահության նախարարություն

<p>1.</p>	<p>Կանանց վաղաժամ մահվան առավել տարածված պատճառ հանդիսացող կաթնագեղձերի և սեռական օրգանների քաղցկեղի վաղ հայտնաբերման և կանխարգելման ծրագրերի իրականացում</p>	<p>2011թ. ընթացքում իրականացվել է արգանդի վզիկի քաղցկեղի սկրինինգում ընդգրկվածության մեծացում, ինչը 2011թ. ընթացքում կազմել է 30%, իսկ վաղ փուլերում հայտնաբերված կաթնագեղձերի քաղցկեղի դեպքերի թիվ աճել է 5%-ով:</p>	<p>Պետական բյուջեի միջոցներ</p>
<p>2.</p>	<p>Մարզերում /Հրազդան, Արմավիր, Ապարան/ բժշկական ժամանակակից կենտրոնների</p>	<p>2011թ. ընթացքում վերանորոգված և այդ տարածաշրջաններում ժամանակակից հագեցման շնորհիվ տղամարդկանց և կանանց որակյալ</p>	<p>Պետական բյուջեի միջոցներ</p>

	վերակառուցում և հազեցում	բուժօգնություն տրամադրման շնորհիվ Երևանի բուժ-հաստատությունների ուղեգրումները կրճատվել են մոտ 20%-ով:	
3.	Բարելավել կանանց վերարտադրողական առողջությունը, ծննդօգնության բուժհաստատությունների կարողությունների հզորացում	Մշակվել են ամբուլատոր բուժհաստատությունների աշխատանքի սկզբունքները, որը նախատեսվում է տպագրել և տրամադրել ամբուլատոր պոլիկլինիկական բուժօգնություն իրականացնող բժշկական կազմակերպություններին:	Պետական բյուջեի միջոցներ
4.	Սեռով պայմանավորված ընտրովի աբորտների կանխարգելմանն ուղղված ծրագրերի մշակում և ներդրում	Իրականացվել է իրավիճակային ուսումնասիրություն և վերլուծություն սեռով պայմանավորված աբորտների և դրա պատճառների վերաբերյալ, որի արդյունքները ամփոփվել են գեկույցով:	ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ
ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն			
1.	Էլեկտրոնային պորտալներում աղետների ռիսկերի նվազեցման արտակարգ իրավիճակներում քաղաքացիական պաշտպանության գործընթացներում գենդերային հիմնախնդիրների մասին ինֆորմացիա պարունակող հղումների տեղադրում	Համացանցում տեղադրվել են աղետների ռիսկերի նվազեցման արտակարգ իրավիճակներում քաղաքացիական պաշտպանության գործընթացներում գենդերային հիմնախնդիրների մասին նյութեր:	Միջազգային կազմակերպություններ
2.	ՀՀ կառավարություն ներկայացված աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարության մեջ գենդերային բաղադրիչի ներդրում (ՄԱԿ-ի զարգացման ծրագրի աջակցությամբ):	<<ՀՀ աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարությանը և աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարության իրականացման գործողությունների ծրագիրը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծում ներկայացված է նաև գենդերային խնդիրը:	Միջազգային կազմակերպություններ
3.	Մեռի հատկանիշի հիման վրա աղետների ռիսկերի նվազեցման ոլորտում տեղեկատվական	<<Արտակարգ ալիք>> լրատվական կենտրոնի կողմից 2011թ. ընթացքում պատրաստվել է աղետների ռիսկերի նվազեցման ոլորտի վերաբերյալ 20 րոպե	Միջազգային կազմակերպություններ

	<p>ակցիաների անցկացում (հեռուստահաղորդումներ, հրապարակումներ, ճեպագրույցներ, քննարկումներ) ՀՀ ԱԻՆ Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի վերապատրաստման համակարգում ներառվում են գենդերային հիմնախնդիրներ:</p>	<p>տևողությամբ հեռուստահաղորդում, որը հեռարձակվել է <<Շանթ>> հեռուստաընկերության կողմից: Պատրաստվել է 2 րոպե տևողությամբ սոցիալական տեսահոլովակ, որը տրամադրվել է կենտրոնական և մարզային զանգվածային լրատվական միջոցներին, ինչպես նաև ապահովվել է այդ տեսանյութերի հեռարձակումը կենտրոնական հեռուստաալիքներից մեկով:</p>	
4.	<p>Աղետների ռիսկերի նվազեցման ազգային պլատֆորմում (ԱՌՆԱՊ)գենդերային թեմատիկ խմբի ստեղծում(ՄԱԿ –ի զարգացման ծրագրի աջակցությամբ)</p>	<p><<Աղետների ռիսկերի նվազեցման ազգային պլատֆորմ>> հիմնադրամի շրջանակներում իրականացվել են աշխատանքներ թեմատիկ աշխատանքային խմբերի ձևավորման համար, այդ թվում նաև գենդերային թեմատիկ խմբի:</p>	<p>Միջազգային կազմակերպություններ</p>
5.	<p>Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի ուսուցողական ծրագրերում գենդերային հիմնախնդիր ներառում</p>	<p>Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի նախաձեռնությամբ վերահրատարակվել են ուսուցողական ձեռնարկներ՝ աղետների ռիսկերի նվազեցման ու գենդերային հիմնախնդիրների թեմաներով:</p>	<p>Միջազգային կազմակերպություններ</p>
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն			
1.	<p>«Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրի իրականացում</p>	<p>Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության ծրագրի շրջանակում 38 կին գործարարներգրավված են եղել 7 սկսնակ ձեռներեցության աջակցության դասընթացներում, որոնք ունեցել են 3 հիմնական բովանդակային ուղղություններ՝ Գործարարության հիմունքներ՝ ներառվել են Գործարարության բնույթը, Ձեռներեցի անձնական և գործարար հատկանիշները, Գործարար գաղափար և նրա վերլուծությունը, Կազմակերպությունների կազմակերպաիրավական տեսակները և գրանցումը, ՀՀ Հարկային դաշտը թեմաները</p>	<p>ՓՄՁ պետական աջակցության 2011թ. ծրագրի շրջանակում համապատասխան ֆինանսավորում չի ապահովվել: Այն իրականացվել է ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (UNDP) հետ համագործակցության շրջանակում</p>

		<p>Գործարար ծրագիր` ներառվել են գործարար ծրագրի էությունն ու բաժինները, մարքեթինգային ծրագիր, արտադրական ծրագիր, կառավարման ծրագիր, ֆինանսական ծրագիր թեմաները:</p> <p>Գործարար ծրագրերի ներկայացում</p>	
2.	«ՓՄՁ-ի սուբյեկտներին ուսուցողական աջակցություն» ծրագրի իրականացում	<p>ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության համապատասխան ենթակառուցվածքների պահպանում և ամրապնդում միջոցառման շրջանակներում Գերմանիայի միջազգային համագործակցության կազմակերպության GIZ-ի համագործակցության շրջանակներում իրականացվել է վերապատրաստման դասընթաց Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի ենթակառուցվածքների զարգացման ու CEFE (Competency Based Economies through Formation of Enterprise) և PACA (Participatory Appraisal of Competitive Advantages) գործիքների օգտագործմամբ հմտությունների փոխանցման միջոցով, որոնց մասնակցել են 15 կին գործարաններ:</p> <p>Հաշվապահական կենտրոնում <բաց դռների> սկզբունքով կազմակերպված դասընթացների ընթացքում աջակցություն է ցուցաբերվել շուրջ 70 կին ՓՄՁ սուբյեկտի ներկայացուցչի</p>	ՀՀ պետական բյուջե և միջազգային կազմակերպություններ
3.	«ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն» ծրագրի իրականացում	<p>Գործարար տեղեկատվություն և խորհրդատվական աջակցություն է ցուցաբերվել 2004 կին գործարարի: Տրամադրվել են հարկային և մաքսային օրենսդրություններում փոփոխությունների վերաբերյալ բրոշյուրներ և ամփոփ բուկլետներ: ՓՄՁ ԶԱԿ կենտրոն և մասնաճյուղեր այցելած կին գործարարներին տրվել են պրակտիկ խորհուրդներ:</p>	ՓՄՁ պետական աջակցության 2011 թվականի ծրագրի շրջանակում
4.	Արդյունաբերական ոլորտներում (հատկապես թեթև արդյունաբերության) կանանց հա-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության և մասնավոր հատվածի համագործակցության արդյունքում` հարկային արտոնություններ են տրամադրվել	Մասնավոր հատվածի կողմից ներդրումներ

մար նոր աշխատատեղերի ստեղծում	<p>հանրապետության մի շարք կազմակերպությունների, որոնք 2011 թվականին իրականացնելով ներդրումային ծրագրեր՝ գործարկել են նոր արտադրություններ (կամ ընդլայնել) և ստեղծել նոր աշխատատեղեր, այդ թվում՝ կանանց համար: Նոր ստեղծված (կանանց) աշխատատեղերի շարքում կարելի է նշել «Մպայկա» ՍՊԸ՝ 132, «Արարատի սննդի կոմբինատ» ՍՊԸ՝ 27, «Պեպսի-կոլա բոթլեր Հայաստան» ՓԲԸ՝ 21, Լիկվոր ՓԲԸ՝ 13, «ՎԿՍ Արմենիա» Ամասիայի տեղամաս՝ 85, «ՎԿՍ Արմենիա» Երևանի տեղամաս՝ 67, «Սարանիստ» ՍՊԸ՝ 6, «Յու Քոմ» ՍՊԸ՝ 38, «Բիգա» ՍՊԸ՝ 8, «Գլորիա» ՍՊԸ գլխամասային կարի ֆաբրիկա՝ 520 աշխատատեղեր: Նոր լրացուցիչ կանանց աշխատատեղեր են ստեղծվել նաև Գյումրու «Գևորգ և Վահան» ՍՊԸ՝ 15, «Տոսպ» ԲԲԸ:</p>	
-------------------------------	---	--

ՀՀ Կոտայքի մարզպետարան

<p>1. <<ՀՀ գենդերային քաղաքականության 2011-2015թթ. ռազմավարական ծրագրի, ընդդեմ գենդերային բռնության 2011թ-2015թթ.-ի ազգային ծրագրի և կանանց հիմնահարցերի առումով առաջիկա անելիքների մասին>> քննարկում մարզխորհրդի նիստում</p>	<p>Մարզխորհրդի նիստում (03.08.2011թ.) ներկայացվել է ՀՀ գենդերային քաղաքականության 2011թ. միջոցառումների ծրագիրը: Առաջարկություն է արվել ծրագրի 20-րդ կետի վերաբերյալ համայնքային հաստատություններում անցկացնել իրազեկման աշխատանքներ:</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվել</p>
<p>2. մշտապես գործող գենդերային հանձնաժողովի ստեղծում</p>	<p>ՀՀ կառավարության 2011թ.-ի մայիսի 20-ի նիստի N19 արձանագրային որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 22-րդ կետի պահանջի համաձայն ՀՀ Կոտայքի մարզպետի 29 հուլիսի 2011թ-ի N 94-Ա կարգադրությամբ ստեղծվել է մշտապես գործող գենդերային հանձնաժողով: Հանձնաժողովում ընդգրկվել են մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվել</p>

		պատասխանատուներ, համայնքային ծառայողներ և ՀԿ-ների ներկայացուցիչներ:	
3.	Տեղական ինքնակառավարման մարմիններում գենդերային քաղաքականության վերաբերյալ իրազեկման աշխատանքների իրականացում	Կազմակերպվել է քննարկում ԸԿԵԻՊ բաժնի մասնագետների, ԻՄ-երի աշխատակազմի քարտուղարների և ՀԿ-ների ներկայացուցիչների մասնակցությամբ: Ներկայացվել է ՀՀ գենդերային քաղաքականության 2011թ. միջոցառումների ծրագիրը և ծանոթացվել մարզպետարանի գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի գործառնություններին, առաջարկվել համայնքներում անցկացնել իրազեկման աշխատանքներ:	Ֆինանսավորում չի պահանջվել
4.	ՀՀ գենդերային քաղաքականության 2011-2015թթ. ռազմավարական ծրագրով նախատեսված 2012թ. ընթացքում Կոտայքի մարզում իրականացվելիք միջոցառումների ծրագրի մասին	Մարզխորհրդի նիստում (25.11.2011թ.) առաջարկվել է 2012թ. ընթացքում ակտիվացնել գենդերային հիմնախնդիրներին ուղղված աշխատանքներ, քաղաքային համայնքներում ստեղծել աշխատանքային խմբեր, անցկացնել սեմինարներ, կլոր սեղաններ, հանդիպումներ:	Ֆինանսավորում չի պահանջվել
5.	<<Կանանց շարժումը հազարամյակների խաչմերուկում, նոր մարտահրավերներ և ռազմավարություններ>>, <<Քայլ առաջ դեպի կանանց քաղաքական մասնակցության>> վերատառությամբ կլոր սեղանի անցկացում Հրազդանի տարածաշրջանի դպրոցների փոխտնօրենների և իրավունքի ուսուցիչների մասնակցությամբ	ՀՀ գենդերային քաղաքականության 2011-2015թթ. ռազմավարական ծրագրով նախատեսված 2012թ. ընթացքում Կոտայքի մարզում իրականացվելիք միջոցառումների ծրագրի, ՀՀ Ընդդեմ գենդերային բռնության 2011-2015թթ ազգային ծրագրով նախատեսված 2012թ. ընթացքում Կոտայքի մարզում իրականացվելիք միջոցառումների ծրագրի և մարզի գենդերային հիմնահարցերին նվիրված մարզպետարանի ԸԿԵԻՊ բաժնի մոնիտորինգային տվյալների ներկայացում (26.10.2011թ.):	Ֆինանսավորում չի պահանջվել
6.	Մշտապես գործող գենդերային հանձնաժողովի և Համալսարանական կրթությամբ	Խորհրդաժողովի ընթացքում (26.12.2011թ.) քննարկվել է ՀՀ գենդերային քաղաքականության 2011-2015թթ. ռազմավարական ծրագրի ,ընդդեմ գենդերային բռնության	Ֆինանսավորում չի պահանջվել

<p>կանանց ասոցիացիայի կողմից <<Կանանց շարժումը հազարամյակի խաչմերուկներում. նոր մարտահրավերներ և ռազմավարություն>> ծրագրի շրջանակներում</p> <p><<Գենդերային քաղաքականության իրականացման հրատապ հիմնախնդիրները մարզում>> Կոտայքի մարզային խորհրդաժողով</p>	<p>2011թ-2015թթ.-ի ազգային ծրագրի և կանանց հիմնահարցերի առումով առաջիկա անելիքները, առաջարկություններ են եղել ՏԻՄ-երի ենթակա կազմակերպություններում ստեղծել աշխատանքային խմբեր:</p>	
---	---	--

ՀՀ Լոռու մարզպետարան

<p>1. Տեղական ինքնակառավարման մարմիններում (այդ թվում՝ համայնքների ղեկավարների աշխատակազմերում) կանանց դերակատարման բարձրացում և ամրապնդում</p>	<p>Ապրիլ ամսին Ստեփանավանում կազմակերպվել է կլոր սեղան քննարկում «Գենդերային պետական քաղաքականության իրականացումը որպես ժողովրդավարության կայացման կարևոր գործոն» թեմայով:</p>	<p>Մարզպետարանի աջակցությամբ</p>
<p>2. Մարզային ենթակայության կազմակերպություններում, տեղական ինքնակառավարման մարմիններում (այդ թվում՝ համայնքների ղեկավարների աշխատակազմերում) գենդերային քաղաքականության վերաբերյալ իրազեկման աշխատանքների իրականացում</p>	<p>Մայիսին Ստեփանավանի տարածաշրջանի գյուղապետերի հետ կազմակերպվել են իրազեկման հանդիպումներ, քննարկվել են հանրության մեջ տարածված գենդերային կարծրատիպերը մեղմելու հնարավորությունները տարածաշրջանում:</p>	<p>Մարզպետարանի աջակցությամբ</p>
<p>3. Համայնքներում գենդերային քաղաքականության վերաբերյալ իրազեկման աշխատանքների իրականացում</p>	<p>Հունիսի 17-ին Վանաձորի թիվ 1 դպրոցի դահլիճում կայացավ “Կրթության ոլորտի գենդերային հիմնախնդիրները ՄԱԿ-ի կանանց կարգավիճակի հանձնաժողովի 55-րդ նստաշրջանի համատեքստում”</p>	<p>ՀԿԿԱ Լոռու մարզային կենտրոնի և Մարզպետարանի աջակցությամբ</p>

		թեմայով կլոր սեղան:	
ՀՀ Վայոց ձորի մարզպետարան			
1.	մարզպետարանում ստեղծել գենդերային հարցերով զբաղվող մշտապես գործող մարմին/հանձնաժողով/	Համաձայն ՀՀ կառավարության 2011թ. մայիսի 20-ի N19 արձանագրային որոշման 2-րդ հավելվածի 22-րդ կետի պահանջի ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2011թ. հունիսի 7-ի 20 կարգադրությամբ ստեղծվել է հանձնաժողով 12 անդամներով	Ֆինանսավորում չի պահանջվել
2.	Մարզխորհրդում քննարկել ՀՀ կառավարության 2011թ. մայիսի 20-ի N19 որոշմամբ հաստատված գենդերային քաղաքականության ռազմավարական ծրագիրը	Մարզխորհրդի 24.06.2011թ. նիստում քննարկվել է ՀՀ կառավարության 2011թ. մայիսի 20-ի N19 որոշմամբ հաստատված գենդերային քաղաքականության ռազմավարական ծրագիրը:	Ֆինանսավորում չի պահանջվել
3.	Համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 20-ի N19 արձանագրային որոշմամբ հաստատված «Գենդերային քաղաքականության 2011-2015թթ. ռազմավարական ծրագիրը և գենդերային քաղաքականության 2011թ. միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ծրագրի 2-րդ կետի յուրաքանչյուր տարի մինչև հոկտեմբերի 15-ը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ներկայացնել մարզի գենդերային քաղաքականության ամենամյա /տարեկան/ ծրագիրը	Կազմվել է 2012թ. միջոցառումների ծրագիր, քննարկվել հանձնաժողովի նիստում, ներկայացվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն /12.10.2011թ./:	Ֆինանսավորում չի պահանջվել
4.	ՀՀ-ում գենդերային քաղաքականության 2011-2015թթ. ռազմավարական ծրագրի շրջանակներում համայնքների,	Կազմակերպվել է քննարկում ԱՍՀՆ ներկայացուցչի, 4 ՀԿ-ների և համայնքների 7 անդամների մասնակցությամբ:	Ֆինանսավորում չի պահանջվել

	<p>հ/կ-ների ներկայացուցիչների և մարզպետարանի կառուցվածքային առանձին ստորաբաժանումների աշխատակիցների մասնակցությամբ կազմակերպել քննարկում <<Մարզում գենդերային քաղաքականության հիմնական ուղղություններ>> թեմայով</p>		
5.	<p>Առողջական խնդիրներով հաշմանդամ կանանց իրավունքների իրազեկում և խորհրդատվություն</p>	<p>Հ/կ-ների և ՏԻՄ-երի ներկայացուցիչների մասնակցությամբ կատարվել է տնային այցելություն և հարցումներ 2011թ. հունիսի 1-ից դեկտեմբերի 25-ը:</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջել</p>
ՀՀ Արագածոտնի մարզպետարան			
1	<p>ՀՀ Արագածոտնի մարզպետարանում գենդերային հարցերով զբաղվող մշտական մարմնի ստեղծում</p>	<p>ՀՀ Արագածոտնի մարզպետի 2011թ. հունիսի 8-ի թիվ 57-Ա կարգադրությամբ ստեղծվել է գենդերային հարցերով զբաղվող մարզային մշտական հանձնաժողով՝ մարզպետի տեղակալ Ա.Արսենյանի նախագահությամբ: Հանձնաժողովի կազմում ներառվել են մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ, մարզի 3 քաղաքային համայնքների ղեկավարները, գենդերային հիմնախնդիրներով զբաղվող 2 հասարակական կազմակերպության ներկայացուցիչներ: Հանձնաժողովը տարվա ընթացքում անցկացրել է 3 նիստ:</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվել</p>
2	<p>Մարզային ենթակայության կազմակերպություններում, տեղական ինքնակառավարման մարմիններում (այդ թվում՝ համայնքների ղեկավարների աշխատակազմերում) գենդերային քաղաքականության վերաբերյալ</p>	<p>Մարզի 15 կրթական, առողջապահական կազմակերպություններում, 10 համայնքներում անցկացվել են հանդիպումներ, սեմինարներ, որոնց ընթացքում մասնակիցները իրազեկվել են ՀՀ-ում գենդերային քաղաքականության հայեցակարգի վերաբերյալ ՀՀ կառավարության որոշմանը:</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվել</p>

	իրազեկման աշխատանքների իրականացում		
3.	Հանրակրթական դպրոցների ուսուցիչների գենդերային մտածելակերպի ձևավորում, գենդերային գիտելիքների հաղորդում և գենդերային զգայունություն քարցրացում	Մարզի 20 հանրակրթական դպրոցներում անկացվել են բաց դասեր «ՀՀ-ում գենդերային քաղաքականությունը կրթության ոլորտում», «Գենդերային քաղաքականության խնդիրները» թեմաներով:	Ֆինանսավորում չի պահանջվել
4.	«Ապարանի բժշկական կենտրոն»-ի վերակառուցում և հազեցում ժամանակակից սարքավորումներով	«Ապարանի բժշկական կենտրոն» -ը որակյալ բուժօգնության տրամադրման նպատակով հազեցվել է ժամանակակից բուժսարքավորումներով:	ՀՀ պետական բյուջե
5.	ԶԼՄ-ներում գենդերային հիմնախնդիրների մասին տեղեկատվություն պարունակող նյութերի տեղադրում:	Գենդերային հիմնախնդիրների և ՀՀ-ում գենդերային քաղաքականության հայեցակարգի իրազեկման վերաբերյալ կազմակերպված միջոցառումների մասին տեղեկատվական 5 նյութ է հրապարակվել Արագածոտնի մարզպետարանի կայքում, «Կանթեղ», «Գյուղխորհրդատվություն» թերթերում:	Ֆինանսավորում չի պահանջվել
ՀՀ Արարատի մարզպետարան			
1.	Քաղաքական և հասարակական կյանքում կանանց և տղամարդկանց մասնակցության մասին մոնիտորինգի կազմակերպում	Կազմակերպվել է սեմինար-խորհրդակցություն մոնիտորինգի արդյունքների ներկայացման և քննարկման նպատակով:	Ֆինանսավորում չի պահանջվել
2.	Համայնքներում գենդերային քաղաքականության վերաբերյալ իրազեկման աշխատանքների իրականացում	Կազմակերպվել են կլոր սեղաններ, սեմինարներ համայնքներում գենդերային հիմնահարցեր թեմաներով:	Ֆինանսավորում չի պահանջվել
3.	Գենդերային մտածելակերպի ձևավորման, գենդերային գիտելիքների հաղորդման և	Աշխատանքային խմբից ընտրված մասնագետները հանդիպումներ են կազմակերպել մարզի 11 դպրոցներում:	Ֆինանսավորում չի պահանջվել

	գենդերային զգայունության բարձրացման նպատակով հանդիպումներ հանրակրթական դպրոցների ուսուցիչների հետ		
4.	Կանանց վերաբուսական առողջության բարելավման նպատակով կազմակերպել անվճար բուժհետազոտություններ	Համապատասխան մասնագետները այցելել են համայնքների բուժամբուլատորիաներ	Ֆինանսավորում չի պահանջվել
5.	Հաշմանդամ կանանց կարիքների գնահատում	Աշխատանքային խմբի մասնագետները այցելել են հաշմանդամ կանանց գնահատել կարիքները, իրականացվել է բուժհետազոտություն, սայլակի կարիք ունեցողներին տրամադրվել են սայլակներ	<<Հայկական ճամբար>> լեզվի և առագաստանավի դպրոց
6.	Կանանց լիդերության սեփական իրավունքների պաշտպանության տեխնոլոգիաների ուսուցման դասընթացների կազմակերպում	Կազմակերպվել են դասընթացներ ակտիվ կանանց համար	<<Համալսարանական կրթությամբ կանանց ասոցացիա>>
7.	Համագործակցություն վարկային և միկրովարկային ծրագրեր իրականացնող կազմակերպությունների հետ	Կազմակերպվել են հանդիպումներ բանկային համակարգի մասնագետների հետ	Ֆինասավորման աղբյուրը
ՀՀ Արմավիրի մարզպետարան			
1.	Մարզային ենթակայության կազմակերպություններում, տեղական ինքնակառավարման մարմիններում /այդ թվում՝ համայնքների ղեկավարների աշխատակազմ/ գենդերային քաղաքականության վերաբերյալ իրազեկման աշխատանքների իրականացում	գենդերային քաղաքականության իրազեկման աշխատանքները կազմակերպվել են շուրջ 30 համայնքներում՝ մարզպետարանի, ՀԿ-ների կողմից խոհրդակցությունների, կլոր-սեղանների միջոցով:	Մարզպետարանի աջակցությամբ
2.	Հանրակրթական դպրոցի	կազմակերպվել են կլոր-սեղաններ, սեմինարներ,	Մարզպետարանի

	<p>ուսուցիչների որակավորման բարձրացումն ուղղված նրանց գենդերային մտածելակերպի ձևավորմանը, գենդերային գիտելիքների հաղորդմանը և գենդերային զգայունության բարձրացմանը</p>	<p>կինոդիտումներ /գենդերային բռնության <<Մանրապատումներ>>, <<Թիթեռ>> տեսաֆիլմեր/ տրամադրվել է գենդերային գիտելիքներին վերաբերող նյութեր թվով 100 դպրոցներում, որի արդյունքում մի քանի դպրոցներում կազմակերպվել են երեխաների կողմից բեմադրված ներկայացումներ, ինտերակտիվ քննարկումներ:</p>	<p>աջակցությամբ</p>
3.	<p>ԶԼՄ-ներում գենդերային հիմնախնդիրների մասին ինֆորմացիա պարունակող նյութերի տեղադրում</p>	<p>գենդերային քաղաքականության իրազեկումը իրականացվել է նաև ԶԼՄ-ների միջոցով, նոյեմբերի 25-ից դեկտեմբերի 10-ը ընկած ժամանակահատվածում հրապարակվել են ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակ քարոզարշավին նվիրված տեսանյութեր:</p>	<p>Մարզպետարանի աջակցությամբ</p>
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան			
1.	<p>Մարզխորհրդում քննարկել Հայաստանի Հանրապետության 2011թ. մայիսի 20-ի ՀՀ կառավարության նիստի 19 արձանագրային որոշմամբ հաստատված < Գենդերային քաղաքականության 2011թ. միջոցառումների ծրագիրը> մշակել այդ ծրագրի 5-րդ կետի պահանջներից բխող մարզում կատարվելիք աշխատանքների հիմնական ուղղությունները</p>	<p>Մարզխորհրդի նիստերի ընթացքում Ը.Կ.Ե.Ի.Պ. բաժնի կողմից քննարկման է ներկայացվել 2011թ. գենդերային քաղաքականությանը վերաբերվող իրականացվելիք միջոցառումները: Քննարկումներին մասնակից են դարձել համայնքների ղեկավարներ, կրթության, առողջապահության, մշակույթի ներկայացուցիչներ գործադիր իշխանության տարածքային մարմինների ղեկավարներ, ՀԿ-ներ: Քննարկումներին մասնակցում էր նաև ՀՀ ՏԿ- նախարարության ներկայացուցիչը:</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվել</p>
2.	<p>Կազմակերպել ՀՀ գենդերային քաղաքականության 2011-2015թթ. Ռազմավարական ծրագրի և ՀՀ գենդերային քաղաքականության 2011թ.ի միջոցառումների ծրագրի</p>	<p>Իրազեկումը կատարվել է համայնքների ղեկավարների աշխատակազմի և դպրոցների մանկավարժական կոլեկտիվների շրջանակներում, ծրագրի ընթերցմամբ: Քննարկմանը մասնակցել են նաև ՀԿ-ների ներկայացուցիչներ, արդյունքները ամփոփվել է մարզպետարանում:</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվել</p>

	իրագրելու/հաղորդման ձևով/։ Մարզի համայնքներում կազմակերպել քննարկումներ մասնակից դարձնելով համայնքների ղեկավարներին, հիմնական և ավագ դպրոցների տնօրեններին, ինչպես նաև կանանց հիմնախնդիրներով զբաղվող ՀԿ-ներին։		
3.	ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանում գեղերային հարցերով զբաղվող մշտական մարմնի ստեղծում	ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 17.06.2011թ.թիվ 52-Ա կարգադրությամբ ստեղծվել է գեղերային հարցերով զբաղվող մշտական գործող հանձնաժողով։	Ֆինանսավորում չի պահանջվել
ՀՀ Շիրակի մարզպետարան			
1.	Գեղերային հարցերով զբաղվող մշտական մարմնի ստեղծում	07.07.2011թ Շիրակի մարզպետի թիվ 63 կարգադրությամբ ստեղծվել է Գեղերային հարցերով զբաղվող Շիրակի մարզային հանձնաժողով։	Ֆինանսավորում չի պահանջվել
2.	ՏԻՄ-ում /այդ թվում համայնքների ղեկավարների աշխատակազմերում/ գեղերային քաղաքականության վերաբերյալ իրագրելի ման աշխատանքների իրականացում	Մարզի 5 տարածաշրջանում անցկացվել է Գեղերային քաղաքականության 2011-2015թթ. ռազմավարական ծրագրի ներկայացում։	Ֆինանսավորում չի պահանջվել
3.	Գեղերային քաղաքականության վերաբերյալ իրագրելի ման աշխատանքների իրականացում մարզային ենթակայության կազմակերպություններում	Կլոր-սեղան-քննարկում <Ընդդեմ գեղերային բռնության 2011-2015թթ ռազմավարական ծրագրի> վերաբերյալ՝ մարզային ենթակայության կազմակերպությունների, ՀԿ-ների և ՋԼՄ-ների մասնակցությամբ։	Ֆինանսավորում չի պահանջվել
ՀՀ Տավուշի մարզպետարան			
1.	Մարզային ենթակայության	Հուլիս-սեպտեմբեր ամիսներին Նոյեմբերյանի	Ֆինանսավորում չի

	կազմակերպություններում, տեղական ինքնակառավարման մարմիններում (այդ թվում՝ համայնքների ղեկավարների աշխատակազմերում) գենդերային քաղաքականության վերաբերյալ իրազեկման աշխատանքների իրականացում	տարածաշրջանի համայնքների ղեկավարների հետ անց են կացվել „Գենդերային գիտելիքների հիմունքներ,, թեմայով խորհրդակցություններ:	պահանջվել
2.	Հանրակրթական դպրոցների ուսուցիչների շրջանում գենդերային գիտելիքների հաղորդում եւ գենդերային գիտելիքների բարձրացում	Բերդի տարածաշրջանի հանրակրթական դպրոցների ուսուցիչների համար կազմակերպվել են „Կրթության ոլորտի գենդերային հիմնախնդիրները ՄԱԿ-ի կանանց կարգավիճակի հանձնաժողովի 55-րդ նստաշրջանի համատեքստում,, թեմայով կլոր սեղաններ:	Ֆինանսավորում չի պահանջվել
3.	Մարզային ԶԼՄ-ներով գենդերային հիմնահարցերի մասին ինֆորմացիա պարունակող նյութերի տեղադրում	Մարզային ԶԼՄ-ներով պարբերաբար լուսաբանվել են մարզում գենդերային հիմնահարցերի վերաբերյալ ինֆորմացիա պարունակող նյութեր:	Ֆինանսավորում չի պահանջվել
ՀՀ Սյունիքի մարզպետարան			
1.	ՀՀ Սյունիքի մարզպետարանում գենդերային հարցերով զբաղվող հանձնաժողովի ստեղծում	Սյունիքի մարզում գենդերային քաղաքականության միջոցառումներ իրականացնելու և անհրաժեշտ գործառույթներ ապահովելու նպատակով մարզպետի կարգադրությամբ ստեղծվել է գենդերային հարցերով հանձնաժողով:	Ֆինանսավորում չի պահանջվել
2.	Մարզային ենթակայության կազմակերպություններում, տեղական ինքնակառավարման մարմիններում (այդ թվում՝ համայնքների ղեկավարների աշխատակազմերում) գենդերային քաղաքականության վերաբերյալ իրազեկման աշխատանքների	Մարզի տարածաշրջաններում կազմակերպվել են գենդերային քաղաքականության 2011-2015թթ ծրագրի վերաբերյալ իրազեկման աշխատանքներ, որին մասնակցել են համայնքի ղեկավարներ, դպրոցի տնօրեններ, մարզային տարբեր կառույցների ներկայացուցիչներ և ՀԿ-երի անդամներ	Ֆինանսավորում չի պահանջվել

	իրականացում		
3.	Մարզում գործող կանանց հարցերով զբաղվող ՀԿ-երի հետ համագործակցություն	ՀԿ-ների հետ քննարկվել է 2012թ. իրականացվելիք աշխատանքների ծրագիրը և նախատեսվել համատեղ միջոցառումներ:	Ֆինանսավորում չի պահանջվում
Երևանի քաղաքապետարան			
1.	Երևանի քաղաքապետարանում գենդերային հարցերով զբաղվող մշտական մարմնի ստեղծում	Երևանի քաղաքապետի 15.07.2011թ. N354-Ա կարգադրությամբ Երևանի քաղաքապետարանում ստեղծվել է գենդերային հարցերով հանձնաժողով	Ֆինանսավորում չի պահանջվել
2.	Վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների շրջանում գենդերային քաղաքականության վերաբերյալ իրազեկման աշխատանքների իրականացում	Կազմակերպվել են քննարկումներ վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների ներկայացուցիչների մասնակցությամբ:	Ֆինանսավորում չի պահանջվել
3.	Վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների կողմից 2012թ. գենդերային քաղաքականության շրջանակներում իրականացվելիք միջոցառումների ծրագրերի տեղեկատվության հավաքագրում	Հավաքագրվել են վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների կողմից 2012թ. գենդերային քաղաքականության շրջանակներում իրականացվելիք միջոցառումների ծրագրերը:	Ֆինանսավորում չի պահանջվել
4.	Երևանի քաղաքապետարանում վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների համար սեմինարի կազմակերպում	Երևանի քաղաքապետարանում վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների համար կազմակերպվել է սեմինար` <<Գենդերային ռազմավարություն և հիմնախնդիրներ>> թեմայով:	Ֆինանսավորում չի պահանջվել
5.	Սոցիալական ծառայությունների տարածքային և վարչական շրջանների ղեկավարների	Երևանի քաղաքապետարանը և վարչական շրջանների ՄՕՏԲ-ները համատեղ սոցիալական ծառայությունների տարածքային և վարչական շրջանների ղեկավարների	Ֆինանսավորում չի պահանջվել

	<p>աշխատակազմերի սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի բաժինների աշխատակիցների շրջանում գենդերային քաղաքականության վերաբերյալ իրազեկման աշխատանքների իրականացում</p>	<p>աշխատակազմերի սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի բաժինների աշխատակիցներին բաժանվել է մեթոդական գրականություն:</p>	
<p>6.</p>	<p>Սոցիալապես ծանր իրավիճակներում հայտնված ընտանիքներին գենդերային իրավահավասարության վերաբերյալ իրազեկում</p>	<p>Սոցիալապես ծանր իրավիճակներում հայտնված հաշմանդամ, բազմազավակ, միայնակ գործազուրկ ընտանիքների հետ կազմակերպվել են քննարկումներ՝ կապված գենդերային կարծրատիպի վերացման հետ, տրամադրվել են համապատասխան նյութեր</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվել</p>
<p>7.</p>	<p>Երևան քաղաքի առողջապահական հաստատություններում գենդերային քաղաքականության վերաբերյալ աշխատանքների իրականացում</p>	<p>1. Երևան քաղաքի վարչական շրջանների սոցիալական, առողջապահության և ծրագրերի բաժինների աշխատակիցների հետ գենդերային խտրականության վերաբերյալ անցկացվել են քննարկումներ 2. Երևանի քաղաքապետարանի առողջապահական ընկերությունների տնօրենների և աշխատակիցների շրջանում՝ ՀՀ-ում գենդերային հիմնախնդիրների իրազեկման համար ՀԿ-ների համագործակցությամբ կազմակերպվել են կլոր սեղաններ:</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվել</p>
<p>8.</p>	<p>Կանանց վերարտադրողական առողջության պահպանման՝ սեռով պայմանավորված աբորտների կրճատմանը նպաստող ծննդօգնության ծառայությունների հզորացում</p>	<p>Ծննդօգնության ծառայության աշխատակիցների հետ ծննդօգնության որակի բարձրացան, սեռով պայմանավորված աբորտների կրճատման վերաբերյալ կազմակերպվել են քննարկումների, տրվել խորհրդատվություններ:</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվել</p>

9.	<p>Երևան քաղաքի վարչական շրջանների առողջապահության ոլորտում գենդերային մտածելակերպի ձևավորման, գիտելիքների հաղորդման և գենդերային զգայունության բարձրացմանն ուղղված միջոցառումների կազմակերպում</p>	<p>Երևանի քաղաքապետարանի առողջապահական ընկերությունների տնօրենների և աշխատակիցների շրջանում կազմակերպվել են քննարկումներ գենդերային քաղաքականությանն ուղղված գիտելիքների ամրապնդման և զարգացման նպատակով:</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվել</p>
----	---	---	-----------------------------------